ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋԸ

Երեք ամիս է, ինչ չեն աշխատում մարզի արդյունաբերական ձեռնարկությունները, հիմնարկները։ Լուռ են շինհարթակները։ Մարդիկ փաստորեն հրաժարվում են աշխատելուց։ Հրաժարվում են, որովհետև նրանց բարձրացրած հարցերը առ այսօր չեն լուծված։ Դրա հետ մեկտեղ մարդիկ հստակորեն գիտակցում են, որ գործադուլները վնաս են հասցնում երկրամասի տնտեսական բարօրությանը։ Տարեսկզբից չի թողարկվել շուրջ 40 մլն ռուբլու արդյունաբերական արտադրանք, չի իրացվել ավելի քան 5 մլն ռուբլու կապիտալ ներդրում։ Շահագործման չեն հանձնվել հազարավոր քմ բնակմակերես, դպրոցների ու մանկապարտեզների հարյուրավոր տեղեր։ Վատթարացել է աշխատավորների նյութական վիճակը։ Այն օգնությունը, որ սակավ ապահովված ընտանիքներին ցույց է տալիս «Ամարաս» բարեգործական ընկերությունը, բնականաբար չի կարող բավարարել կարիքավորների կենսական պահանջմունքները։

ԽՍՀՄ Գերագույն խորհրդի հանձնաժողովը եկավ, լսեց արցախցիների պահանջները, ցավակցեց ու վերադարձավ։ Երեկ մարզի իրադրության և արցախցիների պահանջի մասին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի հանձնաժողովի նախագահի տեղակալ Բորիս Օլեյնիկը զեկուցեց Գերագույն խորհրդի նստաշրջանին։ Հարց է դրվում հրատապ լուծել Ղարաբաղի պրոբլեմը, մարզը դուրս բերել ստեղծված իրավիճակից, մարզի բնակչությունը փրկել ինքնակործանումից։ Սակայն նստաշրջանը դեռևս չի ասել իր վերջնական խոսքը։ Արցախցիները սպասում են նստաշրջանի որոշմանը։

Այստեղ հայտնի է դարձել, որ ԼՂԻՄ-ի հատուկ կառավարման կոմիտեի նախագահ Ա. Վոլսկուն շտապ հրավիրել են Մոսկվա։ Կան համապատասխան ցուցումներ՝ վերականգնել մարզխորհուրդը և կուսակցության մարզային կոմիտեն իրենց լրիվ լիազորություններով։ Բայց արցախցիները գտնում են, որ դա, այնուամենայնիվ, իրենց բարձրացրած բուն հարցի լուծումը չէ։

Այսօր մարզը շարունակում է մնալ շրջափակման մեջ։ Այն ամբողջությամբ կտրված է դրսի աշխարհից։ Դեռ ավելին, մարզկենտրոնը գրեթե մեկուսացված է իր շրջաններից, իսկ շրջանները՝ իրենց գյուղերից։ Մարտակերտի և Հադրութի շրջանների խոզաբուծական համալիրները կերերի պակասի պատճառով կանգնած են աղետի առջև։ Այդ կերերը ստացվում են Աղդամի և Հորադիզի կերային բազաներից։ Իսկ նրանք կտրականապես հրաժարվում են ֆոնդով հատկացված կերերը տալ իրենց տերերին՝ մարտակերտցիներին և հադրութցիներին։ Մինչդեռ ՆԳ մինիստրության ստորաբաժանումների պաշտպանությամբ այստեղ եկող ավտոմեքենաները քարկոծվում են ու դատարկ վերադառնում։

Ձնալած անբարենպաստ տարվան, մարդիկ իրենց քրտնաջան աշխատանքով գյուղմթերքների արտադրության մեջ վատ արդյունքների չեն հասել։ Խաղողի առատ բերք է աճեցվել, սակայն դժվարություններ կան բերքը դաշտից սպառողին հասցնելու գործում։ Դրությունը որոշակի դժվար է անասնապահության բնագավառում։

Լ. ՄԿՐՏՉՅԱՆ
(Մեր սեփ. թղթ.)